

4220

3kg

W-16

3K9

Ա-16

ԱՐՐԱՄՕՎԱ

- 1 DEC 2009

ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ

ԲԱՆԻՈՐԸ



Թարգմ. ԳՐ. ՂԱՐԱԳ.



ԹԻՖԼԻՍ

Тип. „Братство“, Гумис. 2. | 84. «Եղրայրութեան», Գումիր. 2.

1907

01. 2013



61421-67

ԳԻՒՂԱՅԻՆ ԵՒ ԲԱՆԻՈՐԸ

Բոլոր սօցիալիստական կուսակցությունների վերջնական նպատակն է՝ ձեռք բերել այնպիսի մի կազմ, որտեղ արդիւնա-գործութեան բոլոր միջոցները՝ գործիքները, մեքենաները, գոր-ծարանները, արհեստանոցները՝ պիտի պատկանեն ոչ թէ մասնա-ւոր սեփականատէրերի, ոչ թէ առանձին մարդկանց, այլ ամ-բողջապէս համայն հասարակութեան, ժողովրդին. այն ժամանակ չեն լինի ձեռնարկողներ—տէրեր և վարձկաններ—բանւորներ, այլ կը լինեն միայն հաւասար իրաւունքներով և հաւասար պար-տականութիւններով հասարակական աշխատւորներ. այն ժամա-նակ չեն լինի ոչ հարուստներ, ոչ աղքատներ, ոչ անմիտ փար-թամութիւն, ոչ սովից առաջացած աղքատութիւն, այլ բոլորը հաւասար իրաւունք կունենան հասարակական հասոյթից. իրենց կարիքներին բաւարարութիւն տալու։ Միասին կ'արտադրեն և միասին կ'օգտուեն ու կը բաշխեն իրենց արտադրած իրերը, ար-դիւնքները։ Այդպիսի կազմը հէնց կոչւում է սօցիալիստական և նրան հասնելու համար հաւասարապէս ձգտում են թէ սօցիալ-դեմօկրատները և թէ սօցիալիստ-յեղափոխականները։ Երկու-սըն էլ համաձայն են այն բանում, որ այդ կազմը մի անգամից չեն կարող սահմանել. երկուսն էլ այդ կազմի համար մղող կրօ-ւի գլխաւոր խոչընդոտն են համարում կառավարութեան ինքնա-կալական ձեռք, որը կործանում է ժողովրդի մտաւոր և ֆիզիքա-կան ոյժերը և խափանում նրանց՝ դէպի սօցիալիզմի լուսաւոր գաղափարը տանող ճանապարհը։ Այդ պատճառով թէ սօցիալ-դեմօկրատները և թէ սօցիալիստ-յեղափոխականները գեղեցիկ ա-պագայի համար անգաղար կոխ են մղում այդ կազմի դէմ. դրա-նում հաւասարապէս միանում են թէ առաջինները և թէ վերջին-ները։ Սակայն ինչն է նրանց զանազանում։ Ի՞նչն է երկու կու-

սակցութիւններն բաժանում: Այդ, նախ, այն հարցն է, թէ ում հետ և ի՞նչպէս պէտք է կուել և երկրորդ՝ թէ ի՞նչպիսի կազմ է հարկաւոր պահանջել գիւղացիական տնտեսութեան համար ինքնակալութեան տապալումից յետոյ մինչև սօցիալիզմի իրականանալը:

Մենք մտադիր ենք գիւղացիական հարցի վերաբերմամբ սօց.-դեմօկրատների և սօց.-յեղափոխականների մէջ եղած անհամաձայնութիւնները բացատրելու: Սօց.-դեմօկրատները ասում են—բանւորական դասակարգի ազատութիւնը պէտք է լինի իրենց՝ բանւորների գործը: Բանւորական դասակարգի, պրօլետարիատի մէջ են հաշոււմ նրանք այն բոլոր մարդկանց, որոնք չունին արտադրութեան միջոցներ, այսինքն այն գործիքներն ու մեքենաները, որոնք նրանց անհրաժեշտ են աշխատանքի համար: Այդպիսով, ըստ այս հայեացքի, տարբերում են արտադրութեան միջոցներ ունեցող մարդիկը—կա պիտալիստները արտադրութեան բոլոր միջոցներից զուրկ մարդկանցից—պրօլետարներից, որոնց չարքում պէտք է հաշուել—եթէ ուղիղ համարենք սօց.-դեմօկրատների հայեացքը—վարձու բանւորների հետ միասին նաև գործարանի կառավարչին, որովհետև չէ՞ որ դրանք բոլորն էլ տէր չեն այն գործարանին, որտեղ առաջինները բանում են, իսկ վերջինը կառավարում: Ըստ սօցիալ.-դեմօկրատների այս մի և նոյն հայեացքի, գիւղացիները իրենց հագին մեծամասնութեամբ պատկանում են ոչ թէ բանւորական դասակարգին, այլ բուրժուազիային, գործարանատէրերի դասակարգին, և այդ այն պատճառով, որ նրանք, գիւղացիները, ունին արտադրութեան սեփական միջոցներ՝ արօր, ցաքան, դմբիչ, ձի, հող:—Բանւորական դասակարգի ազատութեան, սօցիալիզմի համար մղւող կրօնում, ըստ սօց.-դեմօկրատների հանդիսանում են իբրև յուսալի դաշնակիցներ միմիայն քաղաքային վարձու բանւորները, որոնք խմբւած են գործարաններում այնպիսի մեծ մասսաներով, որ հեշտ է նրանց կուլի համար միացնել և տարածել նրանց մէջ սօցիալիստական հայեացքները: Այդ պատճառով սօց.-դեմօկրատները երկար տարիներ շարունակ բացառապէս գործում էին քաղաքային բանւորների շրջանում, իսկ գիւղը, գիւղացիութեան մօտ նրանք կամ բոլորովին չէին գնում, կամ եթէ գնում էին, այն էլ գիւղական պրօլետարների՝ բաւարակների մօտ: Քանի որ գիւղացին հանդիսանում է իբրև սեփականատէր իւր հողի, սօց.-դեմօ-

կրատների կարծիքով, նա չի մտածում ընդհանուրի շահերի համար, չի ուզում, որ մասնաւոր սեփականութիւնը դառնայ հասարակական, չի կարող հասկանալ սօցիալիզմը: Բայց ահա այն ժամանակ, երբ աւելի խոշոր ու արդիւնաւոր կալաժատիրական և վաշխաւական տնտեսութիւնը մինչև հիմք կործանէ գիւղացիական մանր տնտեսութիւնը և ամբողջ հողը մնայ կալաժատէրերի և հզօրների ձեռքում, իսկ գիւղացիները դառնան մի մի վարձու բանւորներ, ինչպէս այդ ամենուրեք տեղի է ունենում քաղաքային մանր արհեստաւորների վերաբերմամբ—միայն այն ժամանակ բաւարակներ դարձած գիւղացիները կարող կը լինին ևս իւրացնել սօցիալիստական հայեացքները: Այդ պատճառով, սօց.-դեմօկրատների կարծիքով, գիւղացիների հող չունենալուց երբէք չըպէտք է վախենալ. պէտք է նոյնիսկ ցանկանալ, որքանից այդ բանը տեղի ունենայ. և որքան շուտ, այնքան աւելի լաւ, որովհետև անհրաժեշտ է այդ աստիճանն անցնել աւելի առաջ գնալու համար. սօցիալիզմի ծնունդը, ինչպէս և իւրաքանչիւր ծնունդ, պիտի տեղի ունենայ նրա հետ շողկապւած երկունքային տանջանքներով: Որպէսզի, ըստ կարելւոյն, աւելի շուտ հասնել սօցիալիզմին այդ ճանապարհով, որ հանդիսանում է սօց.-դեմօկրատների համար միակ հնարաւորն և ուղիղը, նրանք պահանջում են ամենից առաջ գիւղական համայնքի ոչնչացումը: Թէպէտ և սօց.-դեմօկրատները գտնում են, որ համայնքը առանց այդ էլ հազիւ է գոյութիւն պահպանում, որ նա կայուն է միմիայն կառավարութեան ստիպմամբ և որ ինքնակալութեան տապալումով վերջնականապէս կը քայքայւի նաև համայնքը: Նրանց կարծիքով համայնքը վնասակար է նրանով, որ թոյլ չի տալիս բարւոքելու տնտեսութեան միջոցները, որ համայնականները յատկապէս չեն հոգայ հողի այն մասի բարգաւաճման և ոռոգման մասին, որը վերաբաժանման ժամանակ կանցնի որեւէ մէկին: Այդ պատճառով սօց.-դեմօկրատները կողմնակից են ծխական (подворный) հողատիրութեան, հողի վաճառման հեշտացման և թոյլատուութեան, որին այժմ շատ դէպքերում խանգարում է համայնական հողատիրութիւնը. չէ՞ որ հարուստները այդպիսի դէպքում աւելի շուտ կը կարողանան գնել ամբողջ հողը, հիմնել աւելի կատարելագործւած տնտեսութիւն և շատացնել հողի արդիւնաւէտութիւնը, իսկ անհող գիւղացիները թէև ձեռքից կը տան իրենց հողը, բայց միւս կողմից կը դառնան

այնպիսի վարձու բանւորներ, բատրակներ, պրօլետարներ, որոնք սօց. դեմօկրատների կարծիքով, միակ ընդունակն են սօցիալիստական գաղափարը ըմբռնելու և նրա իրականացման համար կուելու: Ճիշտ է, սօց. դեմօկրատները չեն կարող չը համաձայնել, որ գիւղացիները Ռուսաստանի ազգաբնակչութեան ահագին մեծամասնութիւնն են կազմում և որ քաղաքական ազատութեան համար մղող կռիւը կարող է միայն այն դէպքում իւր յաջողութեան վրայ յոյս դնել, երբ գիւղացիները ևս մասնակցութիւն կունենան նրանում, — և հէնց դրա համար էլ սօց. դեմօկրատները կոչ են անում գիւղացիներին ևս դէպի այդ կռիւը, առաջարկելով նրանց կուել ընդհանուր հաւասարութեան, ինքնավարութեան տարածման և հարկերի ու զինւորական ծառայութեան թեթեւացման համար:

Այս հայեացքը սօց. դեմօկրատները պաշտպանել են իրենց գործնէութեան օրերից սկսած մինչև վերջին տարիները: Սակայն վերջին տարիներս, երբ գիւղացիական խառնակութիւնները սովորական երևոյթ են դարձել և երբ իւրաքանչիւր անգամ այդ խառնակութիւնների մէջ լսում է «հողի» որոշ պահանջը, սօց. դեմօկրատները տեսան, որ անկարելի է գիւղացիներին կուել քաշել, անկարելի է նոյն իսկ իբրև ժամանակաւոր դաշնակիցների, եթէ միայն չըմիանալ նրանց այդ գլխաւոր ցանկութեանը: Եւ ահա սօց. դեմօկրատները խոստանում են գիւղացիներին, ոչ բոլորին, այլ միայն կալածատիրական, այն էլ միայն 17 նահանգներում, վերադարձում այն բոլոր «հողակտորների» („отработни"), որոնք խլել են գիւղացիներից 1861 թ. րէֆօրմի ժամանակ: Բայց շուտով այդ բանը քիչ երեւաց նոյն իսկ սօց. դեմօկրատների համար — չենք ասում դեռ ևս գիւղացիների նկատմամբ, որոնք չէին դադարում հող և ազատութիւն պահանջելուց, — և ահա վերջին ժամանակս շատ սօց. դեմօկրատներ, յարմարելով գիւղացիական պահանջներին և հակասելով իրենց գիւղացիական հարցի վերաբերեալ ունեցած հայեացքներին, մեծամեծ զիջումներ արեցին: Մի քանիսը նրանցից միմիայն լրացնում և ընդարձակում են «հողակտորների» հին պահանջը, իսկ ոմանք էլ իրենց զիջողութիւններով աւելի և աւելի հեռու են գնում. այժմ էլ ինչպէս և առաջ, մինչև «հողակտորների» խնդիրը, Ռուսաստանի սօց. դեմօկրատները չունին որոշ ազդարարական, հողային ծրագիր, այլ բաժանւել և այդ հարցի մասին միմեանց հետ շարունակ վիճում են:

Յամենայն դէպս նրանց մեծամասնութիւնը, ըստ երևոյթին, համաձայն է պաշտպանութիւն ցոյց տալու գիւղացիութեան այն բոլոր միջոցներին, որոնք ուղղւած են իրենց դրութիւնը բարւոքելու համար, ընդունելով այդ թւում և հողը, նոյնիսկ մի քանիսի ասելով ամբողջ հողը խոշոր կալածատէրերից խլել:

Սօց. դեմօկրատները որոշակի չեն ասում, թէ իրենք պահանջում են, որ բոլոր հողերը անցնեն գիւղացիների ձեռքը. նրանք չեն ասում, թէ ինչպէս պէտք է բաժանել խլած հողերը և թէ ում պէտք է հասնեն նրանք. պէտք է արդեօք բաժանւեն իբրև մասնաւոր սեփականութիւն թէ կապալով տրւեն ունեւորներին թէ՞ գլխաւորապէս աղքատներին, և այլն և այլն — այս բոլորի մասին միմիայն գուշակութիւններ կարելի է անել: Սօց. դեմօկրատները նոյնիսկ որոշ չեն ասում, թէ արդեօք հողը հարկաւոր է խլել թէ ոչ. նրանք միայն պաշտպանութիւն են խոստանում՝ անշուշտ, այդ էլ այն դէպքում, եթէ հողի խլելը ինքն կամ առանց նրանց մասնակցութեան կատարւի: Այդպէս են սօց. դեմօկրատների գիւղացիական հարցի վերաբերմամբ ունեցած հայեացքները, և այդպէս է նրանց վերաբերմունքը դէպի գիւղացիական շարժումը:

Սօցիալիստ-յեղափոխականները առարկում են սօց. դեմօկրատներին հետեւեալ կերպով.

Դուք ասում էք, «բանւորական դասակարգի ազատութիւնը պէտք է լինի իրենց՝ բանւորների գործը»: Միանգամայն ճիշտ է: Մենք դրա հետ համաձայն ենք: Սակայն ում հաշւել բանւորական դասակարգի մէջ: Միթէ միայն բանւորներին: Միթէ գիւղացին, որն իր ամբողջ կեանքը անց է կացնում արդար աշխատանքով, որը տանջւում է սովից, որը ճնշւած է ամեն կողմից — բուրժուա է: Ի՞նչպէս կարող է մարդու լեզուն վրայ գալ այդպիսի վերաւորանք հասցնելու համար: Չարմանալի չէ, որ այսպիսի հայեացքներով սօց. դեմօկրատները յաջողութիւն չեն գտնում գիւղացիների մէջ: Սօցիալիստ յեղափոխականների համար կարեւոր է ոչ միայն այն հանգամանքը, թէ արդեօք աշխատաւորը տիրում է իւր աշխատանքի գործիքներին թէ ոչ. նրանց հաւասարապէս զբաղեցնում է նաև այն, թէ արդեօք նա իր աշխատանքովն է ապրում, թէ՞ ուրիշի աշխատանքի պտուղները իւրացնում: Առաջին դէպքում նա պատկանում է բանւորական

գասակարգին, իսկ երկրորդում՝ բուրժուազիային: Իսկ վարձու աշխատանքից չօգտուող աշխատաւոր գիւղացիները կազմում են համայն գիւղացիութեան ահագին մեծամասնութիւնը: Եւ սօց.-յեղափոխականների համար աշխատաւոր գիւղացին և պրօլետարը հանդիսանում են իբրեւ բանւորական կամ աշխատաւորական դասակարգի մեծ ընտանիքի եղբայրներ, ճիշտ այնպէս, ինչպէս իրականութեան մէջ էլ միշտ և ամեն տեղ արիւնական կապերով են կապւած լինում: Միակ տարբերութիւնն այն է, որ բանւորի աշխատանքի պտուղների մեծ մասը խլում է գործարանատէրը, իսկ գիւղացուն մի կողմից թաւանում է գանձարանը, իսկ միւս կողմից կողոպտում են՝ կալածատէրը իր պահանջած կապալային գներով և տուգանքներով. փողատէրը՝ գիւղացու կարիքից օգտուելով չնչին վճարով նրա հացը սեփականացնելով. վաշխառուն՝ առիթից օգտուելով, իր չըտեսնւած տօկօսներով. խանութպանը՝ իր փթած բանների համար իր ցանկացած գինը վերցնելով: Այո, գիւղացին բանւորից, պրօլետարից քիչ չէ տանջւում և գեռ նըրանից աւելի շատ է տառապում իր աշխատանքի պտուղների մշտական խաղաղ կողոպտումից, ուրիշ խօսքով՝ շահագործւելուց: Իւր բոլոր աշխատածից նրան քաղաքային բանւորի աշխատանքի վարձից աւելի քիչ է մնում: Միայն այս շահագործման ձեւերը աւելի քիչ են աչքի ընկնում. նրանց նկատելու համար հարկաւոր է գիւղացիական կեանքը աւելի ուշագրութեամբ քննել: Եւ հէնց սօց.-յեղափոխականները այդ պատճառով առանց տատանւելու պատրաստ են գիւղացիութեան մէջ սօցիալիստական զաղափար մտցնել: Ճիշտ է, քաղաքային պրօլետարիատի կեանքի պայմանները աւելի նպաստաւոր են կուլի համար—նա հեշտութեամբ կարող է իր գիտակցութիւնը զարգացնել, հեշտութեամբ ընդարձակ միութիւններ կազմել, հեշտութեամբ մեծ-մեծ խմբերով կուլի համախմբւել և այլն և այլն:

Եւ այստեղից սօց.-յեղափոխականները այն եզրակացութիւնն են անում միայն, որ այդ կուլում պրօլետարիատը միշտ պէտք է առաջ ընթանայ, որ նա, պրօլետարիատը, պէտք է լինի, այսպէս ասած, այդ կուլի արահայրը: Կարելի է տալ նրան մեծ նշանակութիւն, բայց ծիծաղելի կը լինի չափազանցնել այդ նշանակութիւնը, քանի որ Ռուսաստանում նրա թիւը 10 միլիոնից աւելի չէ: Չը պէտք է մոռանալ նաև, որ իւրաքանչիւր պրօլետարիատ յեղափոխական չէ, կան օրինակ այնպիսի երկրներ,

ինչպէս Անգլիան, Միացեալ Նահանգները, Աւստրալիան, որտեղ արդիւնաբերական բանւորները համարեա ոչինչ զաղափար չունեն սօցիալիզմի մասին: Եւ միւս կողմից էլ, չը պէտք է մոռանալ այնպիսի երկրներ, ինչպէս օրինակ Ունգարիան և Իտալիան, որտեղ գիւղացիական սօցիալիստական շարժումը առաջնակարգ դեր է կատարում:

Ճիշտ է, գիւղացիները, իրենց բախտին թողնւած, տեսնում են միայն իրենց մօտիկ կարիքները և չեն ձգտում սօցիալիզմին: Բայց բոլորովին միեւնոյնը կարելի է ասել նաև սօցիալիստական պրօպագանդից չաղււած, անգիտակից բանւորների վերաբերմամբ, որոնք նոյնպէս քիչ են բողոքում աշխատանքի գործիքների մասնաւոր սեփականութեան դէմ և միայն նախանձով հառաչում, ախ են քաշում նրանց համար: Օհ, ո՛չ! գիւղացին այնքան էլ անյուսալի չէ սօցիալիզմի համար: Դժբախտաբար նրա համար աւելի դժւար է գիտութիւններ ձեռք բերելու հնարաւորութիւն գտնել, քան քաղաքային բանւորի, սակայն նա ունի մի անգնահատելի առաւելութիւն, դարաւոր մի խորին համոզմունք, որ հողը «ոչ ոքի» չէ, «համայնքին» է: Եւ այդ համոզմունքը պէտք է իւրաքանչիւր սօցիալիստի համար թանգ լինի. որովհետև նա կազմում է գիւղացու սօցիալիստական հայեացքներ իւրացնելու անհրաժեշտ գրաւականը: Ի հարկէ, որպէսզի գիւղացին սօցիալիստ դառնայ, այդ բառի լայն մտքով, պէտք է որ բացի համայնական, հասարակական հողատիրութիւնից միացնէ նրան նաև արդիւնքների հասարակական, համայնական մշակունիս ու բաշխումը. նա պէտք է իր այդ համոզմունքը տարածի բացի հողից նաև աշխատանքի միւս բոլոր միջոցների վերաբերմամբ: Սակայն, երբ արւած է առաջին բայը, երկրորդը, երրորդը... աւելի հեշտութեամբ կանւեն: Ի՞նչ միտք ունի արդեօք սօց.-դեմօկրատների այն պահանջը, որ գիւղացիները համայնական հողատիրութիւնից ծխականին անցնին: Չէ՞ որ այն ժամանակ նրանց մէջ չի զարգանայ անձնւիրութիւնը համայնական շահերի վերաբերմամբ, չէ՞ որ այն ժամանակ իւրաքանչիւրը կը սկսի իր հոգսը քաշել, առանց մտածելու ուրիշների մասին, չէ՞ որ գիւղացու համար աւելի գին կ'ունենայ ո՛չ թէ հողից օգտուելը, այլ նրան տիրելը, չէ՞ որ այն ժամանակ գիւղացիք հողը, իբրեւ մի վաճառքի առարկայ կը համարեն, մի բան, որ իւրաքանչիւր անկեղծ սօցիալիստ

տի ատելութիւնը պիտի շարժի: Մենք այդ տեսնում ենք Գերմանիայի, Ֆրանսիայի, Հոլլանդիայի և ուրիշ եւրոպական մի քանի երկրների օրինակից: Այդ տեղերում համայնքը մի քանի տարուց ի վեր արդէն ոչնչացած է և գիւղացիները չափազանց ներշնչւած են սեփականատիրական հայեացքներով: Եւ հէնց դրանցով են դատում մեր սօց.-դեմօկրատները առհասարակ գիւղացիութեան մասին և մասնաւորապէս ռուս գիւղացիութեան մասին, որովհետեւ նրանք համարեաւ ամբողջութեամբ Ռուսաստան են բերել գերմանական սօցիալ-դեմօկրատիական գիտութիւնը, չը հոգալով նրան ռուսական կեանքի ուրոյն պայմաններին յարմարեցնել: Սակայն եթէ իրականանայ նրանց ծրագիրը, Ռուսաստանի գիւղացիութեանն ևս, ի հարկէ, սպառնում է միևնոյն ճակատագիրը: Ո՛չ, համայնքի արժէքը պէտք է բարձր դասել՝ նա զեռ այժմ էլ հանդիսանում է իբրեւ մի պատնէշ ամեն տեսակի կողոպտիչների առաջ, և սօցիալիստներին երբէք ձեռնադրու չէ նրանց թէ տալ, ձգտելով ոչնչացնել համայնքը:

Ի հարկէ, համայնքը, այն ձևով, ինչ ձևով նա գոյութիւն ունի այժմ, այսինքն ղէմսկի նաչալնիկի համայնքը պիտի ոչնչանայ և որքան շուտ, այնքան լաւ. բայց նրա տեղը կը բռնի ազատ հողատէրերի ազատ համայնքը, որը շատ կը նպաստի ժողովրդին սօցիալիզմի համար մղող կռիւ մէջ: Այն առարկութիւնը՝ իբր թէ համայնքը չի թոյլատրում տնտեսական բարենորոգութիւններ մտցնելու՝ անմիտ է: Այժմ արդէն շատ համայնքներ շատ պարզ կերպով լուծում են այդ հարցը. նրանք ստիպում են այն համայնականներին, որ վերաբաժանման ժամանակ ստանում է բարգաւաճ հողամաս, վարձատրել դրա փոխարէն նրա բարգաւաճ դարձնողին: Ճիշտ չէ նաեւ, իբր թէ համայնքը քայքայւում է. եթէ այժմ տեղտեղ համայնքից փախչելու ձգտում է նկատուում՝ զարմանալի չէ. հողը այժմ քիչ է, իսկ հարկերը շատ, և դրանից հետեւում է այն, որ համայնքը իր անդամներին անտանելի հարկերով ծանրաբեռնում է, իսկ վերջիններս էլ ապրուստի և միևնոյն ժամանակ համայնական հարկի մի մասը վճարելու համար ստիպւած են լինում ուրիշ տեղեր աշխատանքի գնալ: Սակայն այդպէս չի լինի Ռուսաստանի քաղաքական ազատութիւնից յետոյ, երբ հողը համաձայն սօց.-յեղափոխականների աշխատաւոր գիւղացիութեան կողմից պաշտպանւած պահանջին, կը յայտարարւի իբրեւ համա-

ժողովրդական կայք և ոչ որ արդէն չի կարողանայ սեփականացնել և օգտւել նրանից ի վնաս միւսներին, առնել կամ ծախել նրան: Եթէ ուրեմն հողից պիտի օգտւին միայն նրա վրա աշխատողները, իւրաքանչիւր ցանկացող իր մշակման կարողութեան համեմատ մի որոշ հողի վրայ կարող է աշխատել: Եւ հէնց այդպիսի կարգ հաստատելուն կաջակցէ գիւղական համայնքը, որն այժմ էլ չի ընդունում հողի մասնաւոր սեփականութիւն: Նա կ'օգնի նոյնպէս աշխատաւոր ժողովրդին՝ համայնական ոգի և հաւասարութեան սկզբունք մտցնելու ժողովրդի ազատ կերպով ընտրւած ներկայացուցիչների մէջ, որոնք կը վճեն հողից օգտւելու եղանակին վերաբերող բոլոր հարցերը: Եւ այն ժամանակ գիւղական երկրագործական համայնքը պատճառ չի ունենայ քայքայելու: Համայնական ընկերական կերպով հողից օգտւելը կամրապնդել, որից յետոյ հեշտութեամբ կը զարգանայ նաեւ հողի համայնական, ընկերական կերպով մշակումը, համայնական տնտեսութիւնը: Թէ մէկը և թէ միւսը կամրապնդւին և կը զարգանան հէնց այն պատճառով, որ այդպէս աւելի օգուտ է: Չէ՞ որ աւելի արդիւնաւէտ կը լինի իւրաքանչիւր հողից ընկերովի օգտւել և միասին ընկերական խոշոր տնտեսութիւն վարել, քան թէ մանր տնտեսութիւն՝ առանձին առանձին: Թէ մէկը և թէ միւսը միաժամանակ հանդիսանում են նաեւ իբրեւ անհրաժեշտ պայման գիւղը սօցիալիստական կարգերի ենթարկելու. որովհետեւ երբ արտադրութեան բոլոր միջոցները մասնաւոր մարդկանց ձեռքից անցնին համայն հասարակութեան ձեռքը, երբ ամբողջ տնտեսութիւնը հասարակական դառնայ, այն ժամանակ արդիւնքներն էլ ժողովրդի կարիքների համեմատ կ'արտադրւին և յօգուտ բոլոր նրա անդամների կը բաշխւին: Եւ սօցիալիստների գործը պիտի լինի հոգալ, որ հէնց այդ ճանապարհով գիւղացիութիւնը հասնի իր վերջնական լուսաւոր նպատակին՝ սօցիալիզմին, — ճանապարհով, որ գալիս է ներքեւից, ինքնուրոյն հողատէրերի՝ հասարակականացած հողի վրայ աշխատող՝ արդիւնաբերական գործակցական միութիւնների միջոցով, հողի, որի վերաբերմամբ իրաւունք ունի իւրաքանչիւր նրա վրայ աշխատել ցանկացողը: Ահա թէ ինչու պէտք է սօցիալիստը թանգ գնահատի ռուսական հողային համայնքը, որը նկատելի կերպով թեթեւացնում է յիշեալ խնդիրը:

Սօց.-դեմոկրատների սխալը հէնց առաջանում է նրանից, որ նրանք սօցիալիզմի իրականացման համար միայն մի միջոց են տեսնում, այն, որ նախապէս պէտք է զրկել աշխատաւորներին արտադրութեան միջոցներից (հողից, գործիքներից). որ արտադրութեան այդ միջոցները պիտի անցնին կապիտալիստական խոշոր տնտեսութիւնների ձեռնարկող մասնաւոր մարդկանց ձեռքը, որ յետոյ արդէն նորից խլին պրօլետարիատի ձեռքով և այդպիսով կապիտալիստների շնորհիւ կենտրոնացած արդիւնաբերութիւնը անցնի ամբողջ հասարակութեան ձեռքը: Այո, դա մի ճանապարհն է միայն, քաղաքներում առհասարակ այդպէս էլ տեղի է ունենում: Սակայն գիւղի վերաբերմամբ այդ ճանապարհը անպէտք է, որովհետեւ գիւղում ձեռնարկող կապիտալիստները աւելի շատ զբաղւում են յափշտակութեամբ, քան կանոնաւոր տնտեսութեամբ. զբաղւում են աւելի շատ հողը առնելով և նորից ծախելով, նրան վաշխառւական գներով գիւղացիներին կապալով տալով և այդպիսով ուրեմն քիչ են նպաստում կանոնաւոր խոշոր գիւղատնտեսական արդիւնաբերութեան զարգացման, որովհետեւ վերջինը նրանց ձեռնտու չէ: Իսկ դրա հետ միասին, հակառակ սօց. դեմոկրատների կարծիքին, մանր հողատէրերը անխուսափելիօրէն երբէք չեն դառնում աշխատանքի միջոցներից զուրկ պրօլետարիներ:

Թէ ինչո՞ւ երբեմն անկախ արհեստաւորների մեծամասնութիւնը դարձել է պրօլետար՝ այդ ուրիշ բան է: Իւրաքանչիւրի համար պարզ է, որ ձեռքի արհեստանոցները չեն կարող մրցել գործարանի հետ, որ այդպիսով քայքայւող արհեստաւորը ստիպւած է լինում իւր թշնամի գործարանատիրոջ մօտ բանւոր մըտնել: Անհամեմատ աւելի հեշտ է գիւղացիական տնտեսութեանը դիմանալ խոշոր տնտեսութեան, որովհետեւ այդտեղ թէև մեքենան մեծ նշանակութիւն ունի, բայց ոչ այնքան մեծ, ինչքան քաղաքային արդիւնաբերութեան մէջ. այնտեղ ահագին ազդեցութիւն ունի տնտեսութեան վրայ նաև աշխատաւորի ջանքը, եռանդը:

Եւ իսկապէս, մենք տեսնում ենք, որ ուրիշ երկրներում էլ չեն իրականացել սօց.-դեմոկրատների յոյսերը, որովհետեւ գիւղացիական մանր տնտեսութիւնները թէպէտ և աղքատանում են, բայց չեն ոչնչանում և նոյն իսկ համարեա ոչ մի տեղ նրանք թւով չեն պակասել: Բացի դրանից, նշանակալից է այն հանգամանքը,

որ թէ այնտեղ և թէ մեզանում արդէն գոյութիւն ունեցող գիւղական բաւարակները հանդիսանում են անհամեմատ աւելի քիչ հակաւած գէպի սօցիալիզմը, քան գիւղացիները: Թէպէտ և նրանք պրօլետարներ են, բայց իզուր է նրանց համեմատել քաղաքային բանւորների հետ, որովհետեւ գիւղական խաւարի մէջ նրանք շատ դժւարութեամբ են գիտութիւններ իւրացնում:

Նրանց թափառական կեանքը ի նկատի ունենալով, դժւար է նրանց միացնել. ցրւած լինելու պատճառով, նրանց համար աւելի դժւար է միասին գործել. բացի այդ նրանք ընկճւած են նաև անտանելի աշխատանքից և ճնշւած մշտական հսկողութիւնից:

Մենք ամբողջապէս բաժանում ենք գերմանացի սօցիալիստ Վ. Լիբկնէխտի կարծիքը, որի համաձայն «ասել՝ թէ գիւղացիները հակակօլլէկտիւիստական են՝ անհեթեթութիւն է: Կան հակակօլլէկտիւիստներ խոշոր արտադրողների, խոշոր վաճառականների, խոշոր հողատէրերի շրջաններում, բայց գիւղացիները կօլլէկտիւիստական են այն չափով, ինչ չափով և քաղաքային բանւորները: Գիւղացիների մէջ պրօպագանդ անելը աւելի դժւար է լոկ ժամանակի և տարածութեան պայմանների պատճառով: Գիւղական ազգաբնակչութիւնն աւելի է բաժան-բաժան եղած, քան քաղաքայինը և այդ պատճառով մենք այնպէս հեշտութեամբ չենք կարող հաւաքել հազարաւոր գիւղացիներ, ինչպէս այդ անում ենք բանւորների վերաբերմամբ: Այդ պատճառով գիւղերում պէտք է քիչ-քիչ պրօպագանդ անել, որ և պահանջում է աւելի շատ ժամանակ և աւելի շատ համբերութիւն:

Բայց, ի հարկէ, մենք չունինք կրկնակի (двойная) ծրագիր, ինչպէս չունինք կրկնակի ճշմարտութիւններ կամ կրկնակի բարոյականութիւն»:

Ահա թէ ինչո՞ւ սօցիալ դեմոկրատների ծրագիրն և նրանց գիւղացիական հարցի մասին ունեցած վերաբերմունքը սօց.-յեղափոխականները համարում են անհիմն ու չըմտածւած: Ռուսաստանի սօց.-դեմոկրատները հիանում, տարւում, են մեծ Մարքսի տեսութեամբ, որը իրաւացի է անցեալ դարում Անգլիայի վերաբերմամբ. բայց որը կարօտ է 20-րդ դարի Ռուսաստանի վերաբերմամբ արմատական ուղղումների: Սօց. դեմոկրատները իրենց հիացմունքով տարւած՝ նոյնիսկ չեն նկատում այն հանգամանքը,

որ պրօլետարիատը անկարող կը լինի յաջող կռիւ մղել կապի-
տալիստների դէմ այն դէպքում, երբ աղքատացող գիւղացիները
շարունակեն ահագին խմբերով գիւղից գնալ գործարանները և
իջեցնել այնտեղ բանւորական աշխատավարձը. չեն նկատում նաև
այն, որ գիւղում սօցիալիզմին հասնելու ճանապարհը ուրիշ է,
այսինքն ոչ կապիտալիզմի կամ պրօլետարիզացիայի միջոցով:
Սօց.-յեղափոխականները միանգամայն համաձայն են սօց. դեմօ-
կրատների հետ այն բոլոր բաներում, որոնք վերաբերում են ինք-
նավարութեան, հարկերի և զինւորական ծառայութեան թեթևաց-
ման. բայց դա գեռ բիչ է ասում ին նրանք: Չափազանց քիչ!
Միայն դրանք չեն բուժի գիւղացիութեան վէրքերը, և միտք էլ
չունի այդպիսի դէպքում նրա կուրս դուրս գալը: Գիւղացու գլխա-
ւոր պահանջն է՝ յանձնել ամբողջ հողը աշխատաւոր ազգաբնա-
կութեան՝ օգտուելու համար: Եւ միայն իւր տնտեսական, պրօֆէ-
սիօնալ կարիքների շնորհով, իր «հողի» պահանջովն է, որ առհա-
սարակ գիւղացիութիւնը գալիս է իւր քաղաքական կարիքների՝
«ազատութեան» գիտակցութեանը, ինչպէս և վարձու բանւորնե-
րը զուտ տնտեսական 8 ժամեայ բանւորական օրի պահանջման
շնորհիւ գալիս են ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական
կուրս անհրաժեշտութեան գիտակցութեան: Ի նկատի առնելով այդ
բոլորը, սօց.-յեղափոխականները պնդում են, որ ժողովուրդը կը
ստանայ հողը միայն այն ժամանակ, երբ նրա ձեռքում կը լինի
ազատութիւնը, իշխանութիւնը. իսկ ժողովրդապետութիւնը միտք
չունի առանց ժողովրդի կենսական կարիքին՝ հողի պահանջին՝
բաւարարութիւն տալու: Այդ իսկ պատճառով սօցիալիստ յեղա-
փոխականների կուսակցութիւնը իր դրօշակի վրա, «Կուռով ձեռք
կը բերես դու քո իրաւունքը» դէւիզի հետ միաժամանակ գրում
է նաև «Հող և Ազատութիւն»! Նա այդ իրաւունքների և քաղա-
քական ազատութեան հետ միասին ձգտում է նաև հողի «սօցիա-
լիզացիայի»:



ՀՀ Ազգային գրադարան



NL0185690

